			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	

Վերոհիշյալ մատակարարումների վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքը հանձնեց

ստորագրություն

ազգանուն, անուն
Կ.Տ.

Ապրանքը ընդունեց

ստորագրություն

ազգանուն, անուն
Կ.Տ.

ԱԿՏ N
պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ «Դիլիջան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի (այսուհետ՝ Ստացող) և «_____» _____-ի (այսուհետ՝ Մատակարար) միջև «_____» «_____» 2016 թվականին կնքված № ՇՀԱՊՁԲ-15/12 (ԴԱՊ-ՇՀԱՊՁԲ-16/13-Ա) գնման պայմանագրի շրջանակներում Մատակարարը «_____» «_____» 2016 թվականին հանձնման- ընդունման նպատակով Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

Ապրանքի		
Անվանումը	Քանակական ցուցանիշը (փաստացի)	Չափի միավորը

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

ազգանուն, անուն

ստորագրություն

Ընդունեց

հայտը նախագծած ներկայացուցիչ՝

ազգանուն, անուն

ստորագրություն

շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հրավերի

**ՖՈՏՈՆԿԱՐԱՀԱՆՄԱՆ ԽՑԻԿՆԵՐԻ
ՁԵՌՔԵՐԵՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
№ «ՇՀԱՊՁԲ-15/12 (ԴԱՊ-ՇՀԱՊՁԲ-16/13-Բ)»**

ք. Երևան

«_____» «_____» 2016թ.

«Դիլիջան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ն, ի դեմս տնօրեն Ս.Մուրադյանի, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման (այսուհետ՝ «Գնորդ»), մի կողմից, և «_____»-ն, ի դեմս տնօրեն _____ի, որը գործում է «_____»-ն կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ «Մատակարար» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.2. Մատակարարը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ Պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով և գնման ժամանակացույցով նախատեսված ժամկետներում (Հավելված 2) Գնորդին կամ նրա կողմից որոշված Ստացողին մատակարարել Պայմանագրի Հավելված 1-ով՝ Տեխնիկական բնութագրով նախատեսված **ապրանքները** (այսուհետ՝ Ապրանք), իսկ Գնորդը (Ստացողը) պարտավորվում է ընդունել այդ Ապրանքը և վճարել դրա համար (Հավելված 3):

2. ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

2.3. Մատակարարն Ապրանքը մատակարարում է Գնորդին (Ստացողին) Պայմանագրի Հավելված 2-ով՝ գնման ժամանակացույցով սահմանված ծավալներով և ժամկետներում:

2.4. Մատակարարն Ապրանքը հասցնում է Գնորդին (Ստացողին)՝ նրա կողմից նշված հասցեով (ներով):

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1 Գնորդն իրավունք ունի՝

- 3.1.1. Ապրանքը Պայմանագրով սահմանված ժամկետում Մատակարարի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել Ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 3 (երեք) աշխատանքային օրից ավելի.
- 3.1.2. Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ապրանք.
 - ա) պահանջել հատուցելու Ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.
 - բ) չընդունել Ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի Ապրանքը Պայմանագրին համապատասխանող որակի Ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Մատակարարից վճարելու Պայմանագրի 7.4 կետով նախատեսված տուգանքը.
 - գ) հրաժարվել Պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Ապրանքի համար վճարված գումարը.
- 3.1.3. Եթե հանձնվել է Պայմանագրով որոշվածից պակաս քանակի Ապրանք, ապա.
 - ա) պահանջել լրացնելու Ապրանքի պակաս հանձնված քանակը,
 - բ) հրաժարվել հանձնված Ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե Ապրանքի համար վճարվել է, ապա՝ պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու Պայմանագրի 7.2 կետով նախատեսված տույժը:
- 3.1.4. Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ Ապրանք, իր ընտրությամբ՝
 - ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող Ապրանքը և հրաժարվել մնացած Ապրանքներից.
 - բ) հրաժարվել հանձնված բոլոր Ապրանքներից և պահանջել վճարելու սույն Պայմանագրի 7.2 կետով նախատեսված տույժը.
 - գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող Ապրանքի անհատույց փոխարինում Պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան Ապրանքով.
- 3.1.5. Մատակարարի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել Ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Մատակարարից վճարելու Պայմանագրի 7.2 կետով նախատեսված տույժը:
- 3.1.6. Մատակարարից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Մատակարարի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով Պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է Ապրանք՝ Պայմանագրով նախատեսված փոխարեն՝ Պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև Ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը.
- 3.1.7. Միակողմանի լուծել Պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Մատակարարն էականորեն խախտել է Պայմանագիրը.
- 3.1.7.1. Մատակարարի կողմից Պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝
 - ա) մատակարարվել է անպատշաճ որակի Ապրանք, որը չի կարող փոխարինվել Գնորդի (Ստացողի) համար ընդունելի ժամկետում կամ խախտվել է սույն Պայմանագրի 5.1 կետով սահմանված պայմանը.
 - բ) Ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 3 (երեք) աշխատանքային օրից ավելի,
 - գ) մատակարարված Ապրանքի շուկայական գինը ավելի քան 5 (հինգ) տոկոսով ավելին է Ապրանքի հանձնման պահին շուկայում գործող գներից,

դ) Մատակարարը չի կատարել սույն Պայմանագրի 3.4.4, 3.4.5 և 3.4.9 կետերով նախատեսված պարտավորությունները:

3.1.8. Զննել Ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Մատակարարին:

3.2 Գնորդը պարտավոր է՝

3.2.1. Կատարել Պայմանագրին համապատասխան մատակարարված Ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

3.2.2. Մատակարարի հանձնած Ապրանքից Պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ Ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Մատակարարին:

3.2.3. Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքն ընդունելու դեպքում Մատակարարին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև Պայմանագրի 7.5 կետով նախատեսված տույժը:

3.2.4. Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին Պայմանագրի պայմանները խախտելու մասին Մատակարարին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ Պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լինի՝ ելնելով Ապրանքի բնույթից և նշանակությունից:

3.2.5. Պայմանագրի 3.3.4 կետի համաձայն Պայմանագրի լուծումից հետո Մատակարարին հատուցել վերջինիս վնասները:

3.3. Մատակարարն իրավունք ունի՝

3.3.1. Գնորդից (Ստացողից) պահանջել ընդունելու Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքը:

3.3.2. Գնորդից (Ստացողից) պահանջել հատուցելու վնասները, եթե Մատակարարը Գնորդի (Ստացողի) կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով Պայմանագրի լուծումից հետո՝ ողջամիտ ժամկետում, այլ անձի՝ Պայմանագրով նախատեսվածից ավելի ցածր, սակայն ողջամիտ գնով վաճառել է Ապրանք՝ համապատասխան Պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով:

3.3.3. Գնորդից (Ստացողից) պահանջել վճարելու համապատասխան Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

3.3.4. Միակողմանի լուծել Պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

3.3.4.1. Գնորդի (Ստացողի) կողմից Պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են Ապրանքի համար վճարելու ժամկետները:

3.3.5. Գնորդի (Ստացողի) համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել Ապրանքը:

3.4. Մատակարարը պարտավոր է՝

3.4.1. Գնորդին (Ստացողին) հանձնել Ապրանքը՝ Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում:

3.4.2. Պայմանագրի 2.2 կետին համապատասխան՝ Ապրանքը Գնորդին (Ստացողին) մատակարարել վերջինիս հետ նախապես համաձայնեցված ժամկետներում:

3.4.3. Ապահովել Ապրանքի մատակարարումը սույն Պայմանագրի 3.1.2 «բ» և 3.1.5 կետերին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

3.4.4. Գնորդին (Ստացողին) հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ Ապրանք:

3.4.5. Գնորդին (Ստացողին) հանձնել Պայմանագրի Հավելվածներ 1-ով և 2-ով նախատեսված որակի և քանակի Ապրանք՝ Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իսկ Գնորդի (Ստացողի) պահանջով տրամադրել Ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

3.4.6. Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, Պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

3.4.7. Հետ տանել Գնորդի (Ստացողի) կողմից Պայմանագրի 3.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված Ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել Ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Մատակարարին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

3.4.8. Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն Պայմանագրի 7.2 և 7.4 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

3.4.9. Գնորդին (Ստացողին) հանձնել Ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

3.4.10. Պայմանագրի 3.1.7 կետի համաձայն Պայմանագրի լուծումից հետո Գնորդին (Ստացողին) հատուցել վերջինիս վնասները:

Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

4. ԱՊՐԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1. Պայմանագրով Մատակարարի կողմից հանձնման ենթակա Ապրանքի ընդհանուր գինը առանց ԱԱՀ-ն կազմում է՝ _____ (_____) ՀՀ դրամ: Ապրանքի գինը ներառում է հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները, Ապրանքի գրանցման հետ կապված բոլոր ծախսերը, ինչպես նաև Մատակարարի կողմից իրականացվող բոլոր ծախսերը: Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Մատակարարն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

4.2. Գնորդն (Ստացողը) իրեն մատակարարված Ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Մատակարարի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ Պայմանագրի վճարման ժամանակացույցով՝ Հավելված 3-ով, նախատեսված ամսում, (եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումն իրականացվում է 20 բանկային օրվա ընթացքում) բայց ոչ ավելի, քան նույն հավելվածով՝ վճարման

ժամանակացույցով տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված Ապրանքի դիմաց վճարելու համար վճարման ժամանակացույցով նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումն սույն կետի պայմաններով իրականացվում է այն ամսում, որում դրամական միջոցները նախատեսված են, սակայն ոչ ուշ քան 2016 թվականի դեկտեմբերի 25-ը:

5. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

- 5.2. Մատակարարը երաշխավորում է մատակարարված Ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:
- 5.2. Հիմնական միջոց հանդիսացող ապրանքների համար երաշխիքային ժամկետ է սահմանվում Գնորդի կողմից Ապրանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված առնվազն 365 օրացուցային օրը:
- 5.3. Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են գալիս թերություններ, ապա Մատակարարը պարտավոր է իր հաշվին, Գնորդի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

6. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

- 6.2. Մատակարարն ապրանքը հանձնում է Գնորդին (Ստացողին)՝ Պայմանագրի Հավելված 2-ում նշված ծավալներով և ժամկետներում:
- 6.3. Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Գնորդի (Ստացողի) և Մատակարարի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ, իսկ Պայմանագրի արդյունքը Գնորդին (Ստացողին) հանձնելու փաստը ֆիքսվում է երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը: Մինչև Պայմանագրով նախատեսված Ապրանքի մատակարարման ավարտի օրը ներառյալ Մատակարարը Գնորդին (Ստացողին) է ներկայացնում մատակարարված Ապրանքի մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության երկու օրինակ (Հավելված 4) և Պայմանագրի արդյունքը Գնորդին (Ստացողին) հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (Հավելված 4.1): Սույն կետով նախատեսված պայմանի խախտումը համարվում է մատակարարման ժամկետի խախտում:
- 6.4. Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատակարարված Ապրանքը համապատասխանում է Պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրություն չի ստորագրվում և Գնորդը (Ստացողը)՝
 - ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար Պայմանագրով նախատեսված միջոցները.
 - բ) Մատակարարի նկատմամբ կիրառում է Պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:
- 6.5. Գնորդը (Ստացողը) հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից տասնօրյա ժամկետում Մատակարարին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Ապրանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:
- 6.6. Եթե Գնորդը (Ստացողը) Պայմանագրի 6.4 կետով սահմանված ժամկետում չի ընդունում Պայմանագրի արդյունքը կամ չի մերժում, ապա այն համարվում է ընդունված և Պայմանագրի 6.4 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը (Ստացողը) Մատակարարին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:
- 6.7. Ապրանքի յուրաքանչյուր խմբաքանակի մատակարարման հանձնման-ընդունման արձանագրության հետ մեկտեղ Մատակարարը Գնորդին (Ստացողին) է տրամադրում նաև տվյալ խմբաքանակի Ապրանքների ծագման երկրի սերտիֆիկատը: Սույն կետը չի գործում, եթե չի մատակարարվում Եվրասիական տնտեսական միության անդամ երկրների արտադրության ապրանք:

7. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

- 7.2. Մատակարարը պատասխանատվություն է կրում հանձնած Ապրանքի որակի և Պայմանագրով նախատեսված՝ մատակարարման ժամկետների պահպանման համար:
- 7.3. Մատակարարի կողմից Պայմանագրով նախատեսված Ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Մատակարարից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված Ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:
- 7.4. Պայմանագրի 7.2 և 7.4 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Մատակարարին վճարման ենթակա գումարների հետ:
- 7.5. Պայմանագրի 1.1 կետում նշված Տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Մատակարարից գանձվում է տուգանք՝ Պայմանագրի ընդհանուր գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:
- 7.6. Գնորդի (Ստացողի) կողմից Պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի (Ստացողի) նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:
- 7.7. Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:
- 7.8. Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց Պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

8. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՌԻՏԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը

ծագել է սույն Պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն Պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել Պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

9. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

- 9.2. Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև Պայմանագրի կնքումը, Մատակարարը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու Պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև Պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային Պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում Պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Մատակարարի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման Պայմանագրի կատարմամբ Գնորդի ստացածով:
- 9.3. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի Պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:
- Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ Պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:
- 9.4. Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:
- 9.5. Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա Պայմանագրի անբաժանելի մասը:
- Արգելվում է Պայմանագրում, իսկ եթե Պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ Պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող Ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող Ապրանքի միավորի գնի կամ Պայմանագրի գնի արհեստական փոփոխման:
- Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ Պայմանագրի փոփոխման դեպքերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:
- 9.6. Եթե Պայմանագիրն իրականացվում է գործակալության Պայմանագիր կնքելու միջոցով.
- 1) Մատակարարը պատասխանատվություն է կրում գործակալի պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար.
- 2) Պայմանագրի կատարման ընթացքում գործակալի փոփոխման դեպքում Մատակարարը գրավոր տեղեկացնում է Գնորդին՝ տրամադրելով գործակալության Պայմանագրի պատճենը և դրա կողմ հանդիսացող անձի տվյալները՝ փոփոխությունը կատարվելու օրվանից հաշված հինգ աշխատանքային օրվա ընթացքում:
- 9.7. Եթե Պայմանագիրն իրականացվում է համատեղ գործունեության (կոնսորցիումի) Պայմանագիր կնքելու միջոցով, ապա մասնակիցները կրում են համատեղ և համապարտ պատասխանատվություն: Ընդ որում, կոնսորցիումի անդամի կոնսորցիումից դուրս գալու դեպքում կոնսորցիումի հետ Պատվիրատուի կնքած Պայմանագիրը միակողմանիորեն լուծվում է և կոնսորցիումի անդամների նկատմամբ կիրառվում են Պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցները:
- 9.8. Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև Պայմանագրով այդ ժամկետը լրանալը Պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ՝ Գնորդի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով:
- 9.9. Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Մատակարար կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:
- Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ Պայմանագրի կատարման շրջանակում Մատակարարի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են Պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել Պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Մատակարարը:
- 9.10. Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, Պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել

նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

- 9.11. Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:
- 9.12. Պայմանագիրը կազմված է 5 (հինգ) էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի Հավելվածներ 1; 2; 3; 4 և 4.1 համարվում են Պայմանագրի անբաժանելի մասը:
- 9.13. Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ

«Դիլիջան» ազգային պարկ» ՊՈԱԿ

ք. Դիլիջան, Թբիլիսյան խճ. 2

«Արդշինբանկ» ՓԲԸ Դիլիջան մ/6

ՀՀ 247250000699

ՀՎՀՀ 07610657

«Դիլիջան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի

տնօրեն

Ս. Մուրադյան

(ստորագրություն)

Կ.Տ.

ՄԱՏԱԿԱՐԱՐ

ՀՀ

ՀՎՀՀ

(ստորագրություն)

Կ.Տ.

Անհրաժեշտության դեպքում պայմանագրում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:

Հավելված 1
«_____» «_____» 2016թ. կնքված
№ «ՇՀԱՊՁԲ-15/8 (ԴԱՊ-ՇՀԱՊՁԲ-16/12-Բ)» պայմանագրի

ԳՆՈՐԴ

Դիլիջան» ազգային պարկ» ՊՈԱԿ
ՀՀ Տավուշի, ք.Դիլիջան, Թբիլիսյան խճ. 2
«Արդշինբանկ» ՓԲԸ
ՀՀ 247250000699
ՀՎՀՀ 07610657
«Դիլիջան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի
տնօրեն

Ս.Մուրադյան

(ստորագրություն)

Կ.Տ.

ՄԱՏԱԿԱՐԱՐ

ՀՀ _____
ՀՎՀՀ _____

(ստորագրություն)

Կ.Տ.

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

Զ/Հ	Ապրանքի անվանումը	Զ/Մ	Համառոտ բնութագիրը
-----	-------------------	-----	--------------------

1.	Ֆոտոնկարահանման խցիկ	հատ	Թվային ֆոտոնկարահանման խցիկ (Թվային ֆոտոխցիկ Canon Digital IXUS 860 IS կամ համարժեքը) Օբյեկտիվ • Ֆոկուսացման ռեժիմը՝ ավտոմատ • Ավտոֆոկուսացման տեսակը՝ TTL contrast detection կամ համարժեքը, • Ֆոկուսացման մինիմալ հեռավորությունը՝ ոչ ավել քան 45 սմ, • Ֆոկուսացման մինիմալ հեռավորությունը (մակրոնկարահանում)՝ ոչ ավել քան 3 սմ, • Օբյեկտիվի լուսաուժը՝ F/2.8-5.8 • Խոշորացման կարգավորումը՝ էլեկտրաշարժաբեր Նկարահանում • Թվային խոշորացում՝ ոչ պակաս 4x, • Օպտիկական խոշորացում՝ ոչ պակաս 3.8x, • Մատրիցայի չափը՝ 1/2.5", • Մատրիցայի թույլտվությունը՝ ոչ պակաս 8 մՊիկս, • Պատկերի կայունացուցչը՝ օպտիկական, • Մատրիցայի զգայունությունը՝ ISO 100, ISO 1600, ISO 200, ISO 400, ISO 80, ISO 800, ISO Auto, • Ժամաչափ՝ առկա է, 10 վրկ, 2 վրկ, • Լրացուցիչ՝ DPOF, ավտոանջատում, ամսաթվի և ժամանակի մակատպում, ծայնային բացատրություն, խցիկի կողմնորոշում, ուղիղ արտանցում տպելուն (PictBridge), դեմքի ճանաչում (face detection), հիստագրի ռեժիմ, ծ • Լուսանկարում՝ JPEG - 3264 x 2048, JPEG - 1600 x 1200, JPEG - 2048 x 1536, JPEG - 2592 x 1944, JPEG - 320 x 240, JPEG - 3264 x 2448, JPEG - 640 x 480 • Վիդեոնկարում՝ AVI - 160 x 120 - 15 g, AVI - 320 x 240 - 30 g, AVI - 640 x 480 - 30 g Լուսարձակում • Լուսարձակման ռեժիմները՝ ավտոմատ, անջատված, "կարմիր աչքերի էֆեկտի" խանգարում, • Աշխատանքի մաքսիմալ հեռավորությունը՝ ոչ պակաս 4 մ, Հիշողություն • Հիշողության քարտերի ձևաչափերը՝ MultiMediaCard, SD, SDHC, • Լրակազմում 32 ՄԲթ հիշողության քարտ, Պատյան (Корпус) • Չափսերը՝ ոչ ավել 93x26x59 մմ • Քաշը՝ ոչ ավել 155 գր, Սնուցումը • Սեփական ստանդարտ մարտկոց, • Սնուցման բլոկ՝ լիցքավորիչ, • Մարտկոցը՝ 1, Li-ion, Լրակազմում • Աքսեսուարներ՝ դաստակի փոկ, • Մալուխներ՝ AV-մալուխ, USB-մալուխ:
----	----------------------	-----	--

2.	Ֆոտոնկարահանման խցիկ	հատ	Թվային ֆոտոնկարահանման խցիկ (Nikon COOLPIX P900 կամ համարժեքը) Օբյեկտիվ • Ֆոկուսացման ռեժիմը՝ ավտոմատ • Ավտոֆոկուսացման տեսակը՝ TTL contrast detection կամ համարժեքը, • Ֆոկուսացման մինիմալ հեռավորությունը՝ ոչ ավել քան 50 սմ, • Ֆոկուսացման մինիմալ հեռավորությունը (մակրոնկարահանում)՝ ոչ ավել քան 1 սմ, • Օբյեկտիվի լուսաուժը՝ F/2.8-6.5 • Խոշորացման կարգավորումը՝ էլեկտրաշարժաբեր • Ոսպնյակների արտադրողը՝ Nikon կամ համարժեքը Նկարահանում • Թվային խոշորացում՝ ոչ պակաս 4x, • Օպտիկական խոշորացում՝ ոչ պակաս 83x, • Մատրիցայի չափը՝ 1/2.3", • Մատրիցայի թույլտվությունը՝ ոչ պակաս 16 մՊիկս, • Դիտանը՝ էլեկտրոնային, • Պատկերի կայունացուցչը՝ օպտիկական, էլեկտրոնային, • Մատրիցայի զգայունությունը՝ ISO 100-1600, ISO 12800, ISO 3200, ISO 6400, • Լուսակայման չափը՝ 3D մատրիցային, կետային, • Ժամաչափ՝ առկա է, 2 վրկ, 10 վրկ, • Լրացուցիչ՝ NFC, Wi-Fi ինտերֆեյս, GPS, կալանի ամրակապով, ուղիղ արտանցում տպելուն (PictBridge), դեմքի ճանաչում (face detection), ռեժիմ 16:9, • Լուսանկարում՝ JPEG - 3456 x 3456, JPEG - 4608 x 3072, JPEG - 1920 x 1080, JPEG - 4608 x 2592, JPEG - 640 x 480, JPEG - 1600 x 1200, JPEG - 2272 x 1704, JPEG - 3264 x 2448, JPEG - 4608 x 3456 • Վիդեոնկարում՝ H.264 - 1920 x 1080 - 60 g Լուսարձակում • Լուսարձակման ռեժիմները՝ ավտոմատ, նախնական լուսարձակում, • Աշխատանքի մաքսիմալ հեռավորությունը՝ ոչ պակաս 11,5 մ, Հիշողություն • Հիշողության քարտերի ձևաչափերը՝ SD, SDHC, SDXC Պատյան (Корпус) • Չափսերը՝ ոչ ավել 140x137x103 մմ • Քաշը՝ ոչ ավել 899 գր, Սնուցումը • Սեփական ստանդարտ մարտկոց, • Սնուցման բլոկ՝ լիցքավորիչ, • Մարտկոցը՝ 1, Li-ion, Լրակազմում • Աքսեսուարներ՝ տեսապակու կափարիչ, պարանոցի փոկ, • Մալուխներ՝ USB-մալուխ, • Ներառյալ 32 ԳԲթ հիշողության քարտ:
----	----------------------	-----	--

3.	Ֆոտոնկարահանման խցիկ	հատ	Թվային ֆոտոնկարահանման խցիկ (Canon IXUS 147 կամ համարժեքը) Մատրիցա • Մատրիցայի տեսակը՝ CCD կամ համարժեքը, • Մատրիցայի թույլտվությունը՝ ոչ պակաս 16 մՊիկս, • Մատրիցայի թույլտվությունը (կետեր)՝ ոչ պակաս 4608 x 3456, • Նկարահանման արագությունը՝ ոչ պակաս 0.8 կադր/վրկ, • Մատրիցայի զգայունությունը՝ ISO 100-1600, ISO Auto, • Վիդեոնկարահանման թույլտվությունը (կետեր)՝ ոչ պակաս 1280 x 720, • Վիդեոնկարահանման կադրային հաճախականությունը՝ ոչ պակաս 30, Էկրան • Էկրանի չափը (դյույմ)՝ ոչ պակաս 2,7, • Էկրանի թույլտվությունը (կետեր)՝ ոչ պակաս 230000, Օբյեկտիվ • Օբյեկտիվի ֆոկուսացման հեռավորությունը՝ ոչ պակաս 28-224 մմ, • Օպտիկական խոշորացում՝ ոչ պակաս 8x, • Թվային խոշորացում՝ ոչ պակաս 4x, • Պատկերի կայունացումը՝ թվային, Հիշողություն • Հիշողության քարտերի ձևաչափերը՝ SD, SDHC, SDXC Ինտերֆեյս • USB 2.0 առկայություն, • Վիդեոյով՝ AV, Պատյան (Корпус) • Չափսերը՝ ոչ ավել 54x95x22 մ, • Քաշը՝ ոչ ավել 127 գր, Այլ • Լուսանկարման ձևաչափը՝ JPG, • Վիդեոնկարման ձևաչափը՝ MOV, Լրակազմում • Սեփական ստանդարտ մարտկոց, • Մնուցման բլոկ՝ լիցքավորիչ, • Մալուխներ՝ USB-մալուխ, • Դաստակի փոկ, • Ներառյալ 16 ԳԲթ հիշողության քարտ:
4.	Մատակարարումը		ՀՀ, Տավուշի մարզ, ք. Դիլիջան, Թբիլիսյան խճ. 2

*Պարտադիր պայման է ապրանքի նոր և չօգտագործված լինելը:

Հավելված 2
«_____» «_____» 2016թ. կնքված
№ «ՇՀԱՊՁԲ-15/8 (ԴԱՊ-ՇՀԱՊՁԲ-16/12-Բ)» պայմանագրի

ԳԵՈՐԴ
Դիլիջան» ազգային պարկ» ՊՈԱԿ
ՀՀ Տավուշի, ք. Դիլիջան, Թբիլիսյան խճ. 2
«Արդշինբանկ» ՓԲԸ
ՀՀ 247250000699
ՀՎՀՀ 07610657
«Դիլիջան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի
տնօրեն

Ս.Մուրադյան

(ստորագրություն)
Կ.Տ.

ՄԱՏԱԿԱՐԱՐ

ՀՀ _____
ՀՎՀՀ _____

(ստորագրություն)
Կ.Տ.

ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

(ՀՀ դրամ)

Հ/Հ	Ապրանքի			Նախատեսվում է գնել 2016թ.*								Ընդամենը	
	Անվանումը	Չափման միավորը	Միավորի գինը	I եռամսյակ		II եռամսյակ		III եռամսյակ		IV եռամսյակ			
				քանակը	գինը	քանակը	գինը	քանակը	գինը	քանակը	գինը	քանակը	գինը
1.	Ֆոտոնկարահանման խցիկ	հատ		-	-	-	-	15	-	-	-	15	
2.	Ֆոտոնկարահանման խցիկ	հատ		-	-	-	-	1	-	-	-	1	
3.	Ֆոտոնկարահանման խցիկ	հատ		-	-	-	-	2	-	-	-	2	
Ընդամենը				-	-			-	-	-	-		

ԳԼՈՐԴ
Դիլիջան» ազգային պարկ» ՊՈԱԿ
ՀՀ Տավուշի, ք. Դիլիջան, Թբիլիսյան խճ. 2
«Արդշինբանկ» ՓԲԸ
ՀՀ 247250000699
ՀՎՀՀ 07610657

ՄԱՏԱԿԱՐԱՐ

ՀՀ _____
ՀՎՀՀ _____

#

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն N° ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« _____ » « _____ » 2016թ.

Պայմանագրի անվանումը՝ Ֆոտոտեխնիկայի մատակարարման գնման պայմանագիր
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ « _____ » « _____ » 2016թ.
Պայմանագրի համարը՝ «ՇՀԱՊՁԲ-15/12 (ԴԱՊ-ՇՀԱՊՁԲ-16/13-Բ)»
Պատվիրատուն՝ ի դեմս «Դիլիջան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի տնօրեն Ս.Մուրադյանի և
Պայմանագրի կողմը՝ ի դեմս _____, հիմք ընդունելով
Պայմանագրի կատարման վերաբերյալ « _____ » « _____ » 2016թ. կազմված՝ գնման հայտը
նախագծած ներկայացուցչի N° ____ եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով նախատեսված՝ ստորև
նշված մատակարարումները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված տեխնիկական
բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատակարարել է հետևյալ ապրանքները՝

N	Մատակարարված ապրանքների						
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	

Վերոհիշյալ մատակարարումների վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքը հանձնեց

ստորագրություն

ազգանուն, անուն
Կ.Տ.

Ապրանքը ընդունեց

ստորագրություն

ազգանուն, անուն
Կ.Տ.

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ «Դիլիջան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի (այսուհետ՝ Գնորդ) և «_____» _____-ի (այսուհետ՝ Մատակարար) միջև «_____» «_____» 2016 թվականին կնքված № ՇՀԱՊՁԲ-15/12 (ԴԱՊ-ՇՀԱՊՁԲ-16/13-Բ) գնման պայմանագրի շրջանակներում Մատակարարը «_____» «_____» 2016 թվականին հանձնման-ընդունման նպատակով Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

Ապրանքի		
Անվանումը	Քանակական ցուցանիշը (փաստացի)	Չափի միավորը

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

ազգանուն, անուն

ստորագրություն

Ընդունեց

հայտը նախագծած ներկայացուցիչ՝

ազգանուն, անուն

ստորագրություն

№ «ՇՀԱՊՁԲ-15/12 (ԴԱՊ-ՇՀԱՊՁԲ-16/13)» ծածկագրով
շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հրավերի

ՀԱՐՑՈՒՄ

ՀՀ կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի «Գնումների գործընթացի կազմակերպման»
կարգի 47-րդ կետի 1-ին մասով նախատեսված տվյալների ճշտման մասին

«Դիլիջան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի կարիքների համար կազմակերպված № «ՇՀԱՊՁԲ-15/12 (ԴԱՊ-ՇՀԱՊՁԲ-16/13)» ծածկագրով կազմակերպման գնման
ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 2016 թվականի «_____» «___»-ի № «___» որոշմամբ 1-ին և 2-րդ տեղեր են զբաղեցրել ներքոհիշյալ մասնակիցները՝

N	Մասնակցի		
	անվանումը	հարկ վճարողի հաշվառման համարը	հայտը ներկայացվելու ամիսը, ամսաթիվը, տարեթիվը

Խնդրում ենք ՀՀ կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 48-րդ
կետով սահմանված ժամկետում տրամադրել եզրակացություն մասնակիցների՝ նույն կարգի 47-րդ կետի 1-ին մասով նախատեսված տվյալների վերաբերյալ:

№ «ՇՀԱՊՁԲ-15/12 (ԴԱՊ-ՇՀԱՊՁԲ-16/13)» ծածկագրով գնահատող
հանձնաժողովի քարտուղար Ա.Դիլանյան _____
ստորագրություն

«___» «_____» 2016թ.

№ «ՇՀԱՊԶԲ-15/12 (ԴԱՊ-ՇՀԱՊԶԲ-16/13)» ծածկագրով
շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հրավերի

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՀՀ կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի "Գնումների գործընթացի կազմակերպման" կարգի
47-րդ կետի 1-ին մասով նախատեսված հարցման մասին

Գնման ընթացակարգի ծածկագիրը	Պատվիրա տուի անվանումը	Մասնակցի								
		անվանումը	հարկ վճարողի հաշվառման համարը	հայտը ներկայացվելու օրվա դրությամբ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ժամկետանց հարկային պարտավորություններ ի գումարի չափը/ՀՀ դրամ	հայտը ներկայացվելուն նախորդող երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը/ՀՀ դրամ				հայտը ներկայացվելուն նախորդող հաշվետու տարվա ընթացքում պարտավորությունների և ակտիվների հաշվապահական հավելշույին արժեքը/ՀՀ դրամ	
									ակտիվներ	պարտավորություն
					20..թ.	20..թ.	20..թ.	Ընդամե նը		

Եզրակացությունը տրվել է վարչության աշխատակից-ի կողմից

.....
պաշտոնյայի անունը, ազգանունը

.....
ստորագրություն

№ «ՇՀԱՊՁԲ-15/12 (ԴԱՊ-ՇՀԱՊՁԲ-16/13)» ծածկագրով
շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հրավերի

ՏՈՒԺԱՆՔԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ № «ՇՀԱՊՁԲ-15/12 (ԴԱՊ-ՇՀԱՊՁԲ-16/13)»
(պայմանագրի կատարման ապահովում)

ք. Երևան

«_____» _____ 2016թ.

«_____» _____, ի դեմս Ընկերության տնօրեն՝ _____, Ընկերության տնօրենի անուն ազգանունը, անձնագրային տվյալները _____, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա՝ (այսուհետև՝ Ընկերություն), սույնով միակողմանի սահմանում է հետևյալ տուժանքի համաձայնությունը.

1. ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Ընկերությունը մասնակցում է «Դիլիջան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի (այսուհետև՝ Պատվիրատու) կողմից կազմակերպված՝ «Ֆոտոտեխնիկայի» ձեռքբերման № «ՇՀԱՊՁԲ-15/12 (ԴԱՊ-ՇՀԱՊՁԲ-16/13)» ծածկագրով գնման ընթացակարգին:

1.2 Որպես գնման ընթացակարգի արդյունքում կնքվելիք պայմանագրի կատարման ապահովում, Ընկերությունը Պատվիրատուին է ներկայացնում սույն տուժանքի համաձայնագիրը և կից վճարման պահանջագիրը՝ լրացված և հաստատված Ընկերության կողմից՝ համաձայն ՀՀ կենտրոնական բանկի հաստատած՝ «Վճարահաշվարկային գործառնությունների կատարման ժամանակ կիրառվող փաստաթղթերի նվազագույն վավերապայմանների և դրանց լրացման կանոնների»:

1.3 Ընկերության կողմից գնման ընթացակարգի արդյունքում կնքված պայմանագիրը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում Պատվիրատուն սույն տուժանքի համաձայնագիրը և կից վճարման պահանջագիրը (այսուհետև՝ պայմանագրի կատարման ապահովման վճարման պահանջագիր) ներկայացնում է Ընկերությանը սպասարկող բանկին (այսուհետև՝ Բանկ)՝ այդ մասին գրավոր տեղեկացնելով Ընկերությանը:

1.4 Բանկը պայմանագրի կատարման ապահովման վճարման պահանջագիրը ընդունում է կատարման՝ Պատվիրատուի կողմից սույն տուժանքի համաձայնագրի և գնման ընթացակարգի արդյունքում կնքված պայմանագրի չկատարման կամ ոչ պատշաճ կատարման փաստը հաստատող փաստաթղթի բնօրինակները, որոնք նշվում են պայմանագրի կատարման ապահովման վճարման պահանջագրում, Բանկին տրամադրվելու դեպքում:

1.5 Պայմանագրի կատարման ապահովման վճարման պահանջագրում նշված գումարի վճարման հետևանքով առաջացած ռիսկերի (Ընկերության կրած վնասների) համար Բանկը պատասխանատվություն չի կրում:

1.6 Սույն համաձայնագիրը և կից պայմանագրի կատարման ապահովման վճարման պահանջագիրը Բանկ ներկայացնելուց հետո, Բանկից անկախ պատճառներով, տասն աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուին գումարը չվճարվելու դեպքում, Պատվիրատուն չվճարման հետ կապված Ընկերության մասին տեղեկությունները փոխանցում է «ԱՔՌԱ Քրեդիթ Ռեփորթինգ» ՓԲԸ (Վարկային բյուրո):

2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1 Սույն համաձայնագիրը ուժի մեջ է մտնում Ընկերության կողմից վավերացման պահից և գործում է մինչև Ընկերության կողմից կնքված պայմանագրով նախատեսված պարտավորությունների ամբողջ ծավալով կատարումը:

2.2 Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

Ընկերության անվանումը՝

Հասցեն՝

Սպասարկող բանկի անվանումը.

Հ/Հ

ՀՎՀՀ

տնօրեն՝ _____

(ստորագրություն)

գլխ. հաշվապահ՝ _____

(ստորագրություն)

Կ.Տ

1. ՎՃԱՐՄԱՆ ՊԱՀԱՆՋԱԳԻՐ⁴ N (պայմանագրի կադարման ապահովում)	
2. Ներկայացման ամսաթիվը՝ "___" ___ 20___թ.	
3. Ընկերություն (այսուհետ՝ վճարող) ¹	
4. Վճարողի բանկը՝	
5. Վճարողի հաշվի համարը՝	
6. Վճարողի ՀՎՀՀ՝	
7. Վճարողի ՀԾՀ՝	
8. Շահառու՝	
9. Շահառուի ՀՎՀՀ՝	
10. Շահառուի բանկը՝	
11. Շահառուի հաշվի համարը /h2.N/	
12. Գումարը թվերով և բառերով՝	
13. Արժույթը (բառերով և կոդով)՝	
14. Գործարքի /վճարման/ նպատակը՝	
15. Պայմանագրի ծածկագիրը՝	
16. Փաստաթղթերի անվանումը, դրանց համարները, տրամադրման պայմանը 17. կից՝--- էջ	
19.ա. Շահառուի ստորագրությունները /_____ /_____ 19.բ. Կ.Տ.	18.ա. Վճարողի ստորագրություններ՝ /_____ /_____ 18.բ. Կ.Տ.
Կատարված է շահառուի բանկի կողմից 20.ա. /_____ /ստորագրություն/ 20.բ. Կ.Տ. "___" ___ 20___թ.	Կատարված է վճարողի բանկի կողմից 21.ա. /_____ /ստորագրություն/ 21.բ. Կ.Տ. 22. Կատարման ամսաթիվը՝ "___" ___ 20___թ.

⁴ Վճարման պահանջագիրը լրացվում է համաձայն սույն հրավերով սահմանված «Վճարման պահանջագրի պարտադիր վավերապայմանների և լրացման կարգի»:

Վճարման պահանջագրի պարտադիր վավերապայմանները և լրացման կարգը

Հ/Հ	<<Վճարման պահանջագիր>> փաստաթղթի վավերապայմանները	Նշված դաշտի/ վավերապայմանի առկայությունը փաստաթղթում	Վավերապայմանի լրացման պահանջը	Վավերապայմանը լրացնող կողմը՝ շահառուն կամ վճարողը
1	2	3	4	5
1.	վճարման պահանջագրի համարը	պարտադիր	պարտադիր	լրացվում է շահառուի կողմից՝ վճարողի բանկին վճարման պահանջագիրը ներկայացնելիս
2.	ներկայացման ամսաթիվը	պարտադիր	պարտադիր	լրացվում է շահառուի կողմից՝ վճարողի բանկին վճարման պահանջագրի ներկայացման օրը
3.	վճարող	պարտադիր	պարտադիր լրացվում է այն անձի (վճարողի) անունը, որի հաշվից պետք է գանձվի պահանջագրով նշված գումարը: Լրացվում է վճարողի անունը, ազգանունը, եթե այն ֆիզիկական անձ է կամ անվանումը, եթե այն իրավաբանական անձ է: Նշվում են նաև այլ տվյալներ՝ ըստ անհրաժեշտության: Լրացվում է վճարողի կողմից	լրացվում է վճարողի կողմից
4.	վճարողին սպասարկող ֆինանսական կազմակերպության (մասնաճյուղի) անվանումը (վճարողի բանկը)	պարտադիր	պարտադիր	լրացվում է վճարողի կողմից
5.	վճարողի հաշվի համարը	պարտադիր	պարտադիր լրացվում է վճարողի բանկային հաշվի համարը իրեն սպասարկող ֆինանսական կազմակերպությունում (մասնաճյուղի), որից պետք է գանձվի պահանջագրով նշված գումարը	լրացվում է վճարողի կողմից
6.	վճարողի ՀՎՀՀ	պարտադիր	ոչ պարտադիր լրացվում է Հայաստանի Հանրապետության նորմատիվ իրավական ակտերով սահմանված դեպքերում, երբ վճարողը հանդիսանում է հաշվառված հարկատու	լրացվում է վճարողի կողմից
7.	վճարողի ՀԾՀ	պարտադիր	ոչ պարտադիր լրացվում է Հայաստանի Հանրապետության նորմատիվ իրավական ակտերով սահմանված դեպքերում, երբ վճարողը հանդիսանում է ֆիզիկական անձ	լրացվում է վճարողի կողմից
8.	շահառու	պարտադիր	պարտադիր	նախապես լրացվում է

			լրացվում է շահառու հանդիսացող անձի (վճարումը ստացողի) անվանումը: Նշվում են նաև այլ տվյալներ՝ ըստ անհրաժեշտության	շահառուի կողմից՝ հրավերով
9.	շահառուի ՀՎՀՀ	պարտադիր	ոչ պարտադիր լրացվում է Հայաստանի Հանրապետության նորմատիվ իրավական ակտերով սահմանված դեպքերում, երբ շահառուն հանդիսանում է հաշվառված հարկատու	նախապես լրացվում է շահառուի կողմից՝ հրավերով
10.	շահառուին սպասարկող ֆինանսական կազմակերպության (մասնաճյուղի) անվանումը (շահառուի բանկը)	պարտադիր	պարտադիր	նախապես լրացվում է շահառուի կողմից՝ հրավերով
11.	շահառուի հաշվի համարը	պարտադիր	պարտադիր լրացվում է շահառուի այն բանկային հաշվի համարը, որի վրա պետք է փոխանցվեն վճարողից գանձված միջոցները	նախապես լրացվում է շահառուի կողմից՝ հրավերով
12.	գումարը (թվերով և բառերով)	պարտադիր	պարտադիր լրացվում է շահառուին վճարման ենթակա գումարը	լրացվում է վճարողի կողմից
13.	արժույթը (բառերով և կողով)	պարտադիր	պարտադիր	լրացվում է վճարողի կողմից
14.	գործարքի նպատակը	պարտադիր	պարտադիր	նախապես լրացվում է շահառուի կողմից՝ հրավերով
15.	պայմանագրի ծածկագիրը (համարը)	պարտադիր	պարտադիր լրացվում է պահանջագրի ներկայացման համար հիմք հանդիսացող պայմանագրի համարը կամ գնման ընթացակարգի ծածկագիրը	լրացվում է վճարողի կողմից
16.	փաստաթղթերի անվանումը, դրանց համարները, տրամադրման պայմանները	պարտադիր	ոչ պարտադիր լրացվում է պահանջագրով նշված գումարի գանձման և շահառուին վճարման համար հիմք հանդիսացող փաստաթղթի տվյալները, որոնց հիման վրա շահառուն վճարման պահանջագիր է ներկայացնում վճարողին սպասարկող բանկին, ինչպես նաև նշվում են վճարողին փաստաթղթերի տրամադրման պայմանները (տրամադրում՝ վճարի դիմաց, տրամադրում՝ ակցեպտի դիմաց, տրամադրում՝ երաշխիքի դիմաց և այլն)	լրացվում է շահառուի կողմից
17.	առդիր էջերի քանակը	պարտադիր	ոչ պարտադիր լրացվում է պահանջագրին կից ներկայացված փաստաթղթերի էջերի քանակը, որոնք պետք է	լրացվում է շահառուի կողմից

			տրամադրվեն վճարողին	
18.ա.	վճարողի ստորագրությունը	պարտադիր	ոչ պարտադիր այս դաշտը չի լրացվում, եթե վճարողի և վճարողին սպասարկող ֆինանսական կազմակերպության (մասնաճյուղի) միջև կնքված պայմանագրով սահմանվել են այն դեպքերը, երբ վճարողը նախապես տալիս է իր համաձայնությունը/լիազորում է ֆինանսական կազմակերպությանը (մասնաճյուղին) կատարել վճարումներ՝ գանձելով այդ գումարը հաշվից: Ընդ որում վճարողի կողմից չստորագրվելու դեպքում կից ներկայացվում է նաև վճարողի և վճարողին սպասարկող ֆինանսական կազմակերպության (մասնաճյուղի) միջև կնքված համապատասխան պայմանագրի պատճենը:	ստորագրվում է վճարողի կողմից
18.բ.	վճարողի կնիքը	պարտադիր	պարտադիր՝ կնիքի առկայության դեպքում	կնքվում է վճարողի կողմից
19.ա.	շահառուի ստորագրությունը	պարտադիր	պարտադիր, լրացվում է բանկ ներկայացնելիս	ստորագրվում է շահառուի կողմից
19.բ.	շահառուի կնիքը	պարտադիր	պարտադիր՝ կնիքի առկայության դեպքում	կնքվում է շահառուի կողմից
20.ա .	շահառուին սպասարկող ֆինանսական կազմակերպության (մասնաճյուղի) աշխատակցի ստորագրությունը	պարտադիր	ոչ պարտադիր	
20.բ.	շահառուին սպասարկող ֆինանսական կազմակերպության (մասնաճյուղի) կնիքը	պարտադիր	չի լրացվում	
21.ա.	վճարողին սպասարկող ֆինանսական կազմակերպության (մասնաճյուղի) աշխատակցի ստորագրությունը	պարտադիր	պարտադիր վճարման պահանջագիրը թղթային եղանակով ներկայացնելու դեպքում	
21.բ.	վճարողին սպասարկող ֆինանսական կազմակերպության (մասնաճյուղի) կնիքը	պարտադիր	պարտադիր վճարման պահանջագիրը թղթային եղանակով ներկայացնելու դեպքում	
22.	վճարողին սպասարկող	պարտադիր	պարտադիր վճարողին սպասարկող	

	Ֆինանսական կազմակերպությա ն (մասնաճյուղի) կողմից կատարման ամսաթիվը, ժամը, րոպեն		Ֆինանսական կազմակերպության (մասնաճյուղի) կողմից պարտադիր նշվում է պահանջագրի կատարման ամսաթիվը, ժամը, րոպեն	
--	---	--	--	--